

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

<<___>> փետրվարի 2012թ.

N ___Ա

ՈՐՈՇՈՒՄ

**<<ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ>> ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 22-րդ հոդվածներով, 67-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով և 68-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. <<Սուրբ Աստվածամայր>> բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպել առանձնացման ձևով՝ ստեղծելով <<Սուրբ Աստվածածին>> ձևնդատուն, <<Կարմիր Բլուր>> պոլիկլինիկա և <<Արշակունյաց>> պոլիկլինիկա փակ բաժնետիրական ընկերություններ:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սահմանված կարգին համապատասխան ապահովել <<Սուրբ Աստվածամայր>> բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության վերակազմակերպման գործընթացի իրականացումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**<<ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ>> ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Համաձայն ՀՀ կառավարության 2003 թվականի հոկտեմբերի 30-ի <<Երևան քաղաքի առողջապահական հաստատությունների օպտիմալացման ծրագրի շրջանակներում մի շարք բաժնետիրական ընկերություններ և պետական ոչ առևտրային կազմակերպություններ վերակազմակերպելու մասին>> թիվ 1413-Ն որոշման, Երևանի քաղաքապետարանի <<Շտապ օգնության մանկական N3 կլինիկական հիվանդանոց>>, <<Սուրբ Աստվածամայր ծննդատուն>>, <<N6 բուժմիավորում>>, <<N18 պոլիկլինիկա>>, <<N9 պոլիկլինիկա>> առողջապահական պետական փակ բաժնետիրական ընկերությունները միավորման ձևով վերակազմավորվել են՝ ստեղծվելով <<<Սուրբ Աստվածամայր>> բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունը:

Օպտիմալացման ծրագիրն իրականացվել է Համաշխարհային բանկի կողմից, որը ստանձնել էր միավորման արդյունքում ստեղծված բժշկական կենտրոնի ֆինանսավորումը ՀՀ կառավարության և հիվանդանոցի հետ համատեղ՝ վերանորոգման աշխատանքներ կատարելու և սարքավորումներ ձեռք բերելու համար:

Ծրագրի իրականացման համար 21.05.2005թ. ՀՀ առողջապահության նախարարության, Երևանի քաղաքապետարանի և <<Սուրբ Աստվածամայր>> ՓԲԸ-ի միջև կնքվեց եռակողմ համաձայնագիր, համաձայն որի 2004-2009թթ. կատարվել է բժշկական կենտրոնի ծառայությունների վերակազմակերպում և տեղափոխման աշխատանքներ, արդիականացվել են բժշկական սարքավորումները, կատարվել են ներքին և արտաքին կառավարման բարեփոխումներ: Իրականացվելիք գործողությունների ընդհանուր ծավալը կազմել էր 2.885.950 ԱՄՆ դոլլար, որից շինարարական աշխատանքներ՝ 1.007.420, բժշկական սարքավորումների ձեռքբերում՝ 1.801.110, խորհրդատվական ծառայություններ՝ 58.980, կրթում և վերապատրաստում՝ 18.440 ԱՄՆ դոլլար:

Ծրագրի իրականացման արդյունքում կատարվել են ընկերության հիմնական մասնաշենքի /Արտաշիսյան 46ա/ վնասվածքաբանության, մեծահասակների վիրաբուժական, նյարդաբանական և թերապիայի բաժանմունքների վերանորոգման աշխատանքները: Հիմնովին վերանորոգվել է և հագեցվել է նորագույն սարքավորումներով վերակենդանացման բաժանմունքը:

Ծննդատան մասնաշենքում իրականացվել են գինեկոլոգիական և մանկաբարձական բաժանմունքների ընդունարանների, գինեկոլոգիական բաժանմունքի, վիրահատարանների, արյան փոխներարկման կայանի և ախտահանման բաժանմունքի հիմնովին և արդի վերանորոգման աշխատանքներ: Ծրագրի շրջանակներում ստացվել են նորագույն սարքավորումներ՝ լապրոսկոպ, հիստերոսկոպ, ուլտրաձայնային հետազոտության սարք, դոպլեր սպարատ, արհեստական շնչառության և ընդհանուր անոթայացման սարքավորումներ, մոնիտորներ և այլն:

Ընկերության վարչատնտեսական աշխատակիցները, բաժանմունքների վարիչները և ավագ քույրերը վերապատրաստվել են ՀՀ առողջապահության ազգային ինստիտուտում՝ հիվանդանոցային մենեջմենթ ծրագրով:

Ծրագիրը ավարտվել է 2009թ. և համաձայն ԱԾԻԳ-ի կողմից տրված էքսպերտային գնահատականների ապահովվել են եռակողմ համաձայնագրով նախատեսված բոլոր ցուցանիշները:

Վերջին տարիներին ՀՀ կառավարության կողմից ստանձնած գերակա ուղղություններից է՝ արտահիվանդանոցային բուժսպասարկման մատչելիությունը և որակյալ ծառայությունների մատուցումը:

<<Սուրբ Աստվածամայր>> ԲԿ>> ՓԲ ընկերության կազմում գործում են տարբեր գործառույթներ և նպատակներ հետապնդող /արտահիվանդանոցային և հիվանդանոցային/ ծառայություններ, ինչը չի նպաստում դրանց համաչափ զարգացմանը: Ընկերությունը գործում է հիմնականում պետական պատվերի շրջանակներում /մոտ 85%/, ցածր շահութաբերությամբ: Եկամուտների և ծախսերի նախահաշվով նախատեսված միջոցները հիմնականում ուղղվում են հիվանդանոցային ծառայությունների հզորացմանը և արդիականացմանը: Ստորաբաժանումների ղեկավարները, քանի որ չեն կրում պատասխանատվություն վերջնական արդյունքի համար, խնայողաբար չեն վերաբերվում ծախսերի նկատմամբ: Համաձայն ներքին հաշվապահական հաշվառման ցուցանիշների՝ <<Կարմիր Բլուր>>, <<Արշակունյաց>> պոլիկլինիկաները և ծննդատունը աշխատում

են վնասով: Տարածքային հեռավորությունը վերոնշյալ ստորաբաժանումների և կենտրոնի միջև առաջացնում է լրացուցիչ դժվարություններ ընթացիկ աշխատանքների կազմակերպման և ֆինանսական միջոցների հավաքագրման և կառավարման գործընթացում:

Ներկայումս ընթանում է Երևանի քաղաքապետարանի ենթակայության առողջապահական հաստատությունների արդիականացման ծրագիր, որը ենթադրում է մասնավոր ներդրումների ներգրավումը: Ներդրողների նախապայմաններից մեկն է՝ առանձնացված իրավաբանական միավորի առկայությունը:

Ընկերության կառավարման արդյունավետությունը բարձրացնելու և ներդրումային ծրագրեր իրականացնելու անհրաժեշտությունից ելնելով՝ նպատակահարմար է «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն առանձնացման ձևով վերակազմակերպել՝ ստեղծելով առանձին նոր ընկերություններ:

«Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն», որի կազմի մեջ կընդգրկվեն Արտաշիայան 46ա հասցեում գտնվող հիվանդանոցը և պոլիկլինիկան, «Սուրբ Աստվածածին» ծննդատուն, «Կարմիր Բլուր» պոլիկլինիկա և «Արշակունյաց» պոլիկլինիկա առանձին փակ բաժնետիրական ընկերություններ:

Նոր ընկերությունների ստեղծումը հնարավորություն կտա առանձնացված միավորներին մասնավոր ներդրումներ ներգրավելու, ֆինանսական միջոցներն ավելի արդյունավետ և նպատակային կառավարելու, վերահսկելու, ինչը իր հերթին կնպաստի առողջության առաջնային պահպանման ծառայությունների ավելացմանը և ազգաբնակչությանը մատուցվող բուժապասարկման որակի բարձրացմանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

**<<ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ>> ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ
ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՍ ԲԱՅԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու <<Սուրբ Աստվածամայր>> բժշկական կենտրոն>>
փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու մասին>> որոշման
ընդունման առնչությամբ այլ որոշումների ընդունման անհրաժեշտություն չի
առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

**<<ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ>> ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ
ԵԿԱՍՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու <<Սուրբ Աստվածամայր>> բժշկական կենտրոն>>
փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու մասին>> որոշման
ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում եկամուտների և ծախսերի
փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ